ԳԱՅԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Վ. Ա. ՕՀԱՆՅԱՆ

Քաղաքացիական կռիվների լեգենդար հերոս, Երկաթե դիվիզիայի հրամանատար Գայը (Հայկ Բժշկյանը), ինչպես հայտնի է, դեռ հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ, հայ մամուլում հանդես է եկել որպես բանվոր-թղթակից, գրելով Բաքվի բանվորության համար կենսական նշանակություն ունեցող բազմաթիվ հարցերի մասին՝ «Բանվոր Հայկ» ստորագրությամբ[1]։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ևս, քաղաքացիական կռիվների ժամանակ և սովետական իշխանության առաջին տարիներին Հայկ Բժշկյանը շարունակում էր աշխատակցել հայ մամուլին, հրապարակում էր քաղաքական-պրոպագանդիստական ու տեսական-ռազմագիտական հոդվածներ, ինչպես և առանձին գրքույկներ։

«Կարմիր բանակ» խորագրով բրոշյուրը նրա առաջին աշխատությունն է՝ ստորագրված «Բանվոր Հայկ, հրամանատար Երկաթե զորագնդի»։ Լույս է տեսել 1919 թ. Մոսկվայում, Հայկական կենտրոնական կոմիսարիատի հրատարակությամբ, ինչպես և՝ հատվածաբար «Կոմունիստ» թերթի (Մոսկվա) 1919 թ. համարներում։

Հրատարակչության կողմից գրված առաջաբանում հիշատակվում է, որ գրքույկը գրված է «մեր խնդրի համաձայն և ներկայացնում է իրենից համառոտ մի ուղեցույց Կովկասի կարմիր մարտիկների համար։ Նրանք, որոնք ռուսերենին չեն տիրապետում, կարող են այս բրոշյուրի օգնությամբ ծանոթանալ մեր կարմիր բանակի էության, նպատակների և կազմակերպության հետ»։

Կարմիր բանակի մասին հայերեն գրված այս առաջին աշխատությունը, իսկապես, դառնում է «կարմիր զորաբանակի մեջ գործող հայ զինվորների անհրաժեշտ ձեռատետրը»։

Գրքույկի սկզբում Հ. Բժշկյանը բացատրում է, թե ինչու էր անհրաժեշտ ցարական բանակի քայքայումն ու զորացրումը, և նախ՝ կարմիրգվարդիական ջոկատների, իսկ հետագայում՝ կանոնավոր կարմիր բանակի ստեղծումը։ Նրա երկրորդ գլուխը վերաբերում է կարմիր բանակի բանվորագյուղացիական կազմին, նրա սոցիալիստական էությանը, կոմունիստական կուսակցության զորամասային բջիջների, քաղաքական օրգանների դերին ու անհրաժեշտությանը։

Կարմիր բանակայինը,— գրում է Հ. Բժշկյանը, «պարզորոշ հասկանում ու գիտակցում է, թե ինչու և ում համար է կռվում, ինչ են իր պարտականությունները

---

1 Տե՛ս «Լենինյան ուղիով», 1969, № 8։

ներն ու որն է իր նպատակը։ Կոպիտ, փայտի ուժը, մահվան վախը կամ զոռով կովի քշելու քաղաքականությունը բացակայում է կարմիր զորքի շարքերում։ Նա դնում է պաշտպանելու հեղափոխությունն ու ազատությունը գիտակցաբար ու կամովին»։

Երրորդ գլուխը նվիրված է կարմիր բանակի հրամանատարական բարձրագույն օրգաններին, ռազմադաշտային և թիկունքային զինվորական հիմնարկների կառուցվածքին, դրանց պարտականություններին ու նշանակությանը։

«Կարմիր բանակ» գրքույկի կառուցվածքը, նյութի համակարգումը, շարադրանքի տրամաբանորեն շաղկապված հաջորդականությունը, տեսական եզրակացություններն ու բնորոշումները ցույց են տալիս, որ Հ. Բժշկյանը քաղաքացիական պատերազմի ամենաթեժ տարիներին լրջորեն զբաղվել է իր ռազմագիտական ու քաղաքական գիտելիքների հարստացմամբ։ Շարադրանքի ոճը աշխույժ է, հետաքրքիր ու ջերմ, ագիտացիոն բնույթի։ Բնորոշ է այն հանգամանքը, որ Հ. Բժշկյանը՝ ինքնաբերաբար, ստեղծում ու առաջին անգամ գործ է ածում հայերեն բազմաթիվ ռազմագիտական տերմիններ ու արտահայտություններ՝ զորախորհուրդ, քաղբաժին, զինավարժություն, ռազմականոնագիրք, ռազմագիտություն, զինվորագիտություն, հրամկազմ, զինկոմ, ռազմափիլիսոփայություն, զինարվեստ, զինվորական քարտեզագիտություն, օդաթռիչքների գիտություն, հրանոթային վարչություն, զինվորաերկրաչափական վարչություն, զինհանդերձավորում, ռազմաօրենսդրական խորհուրդ, ռազմա-քաղաքական հետախուզություն և այլն։

Քաղաքացիական պատերազմի հաղթական ավարտից հետո, 1922 թ., երբ Գայը նշանակվում է ՀՍԽՀ ռազմժողկոմ, լույս են տեսնում նրա «Կարմիր բանակի խնդիրները» զրույցը, «Հայկական կարմիր բանակի քաջարի զինվորներին» կոչը, «Վեցերորդ տարվա մեր խնդիրները» հոդվածը, իսկ 1923 թ.՝ «Զինաթափման հարցի շուրջը» և «Հեծելազորի նշանակությունը ժամանակակից պատերազմներում» տեսական հոդվածները[2]։

«Կարմիր բանակի խնդիրները» Արմենտայի աշխատակցի հետ ՀՍԽՀ ռազմժողկոմ Գայի ունեցած զրույցի շարադրանքն է։ Տվյալ էտապում Գայը կարմիր բանակի հիմնական խնդիրն է համարում «ռազմական մարզությունը», որովհետև «մենք նպատակ ունենք փոքրացնելով կարմիր բանակի թիվը, բարձրացնել նրա ընդունակություններն ու որակը»։

Հիշատակելով, որ կարմիր բանակը կրճատելու հետ միասին, վերջին երկու տարվա ընթացքում զգալի նվաճումներ են ձեռք բերված կարգապահության բարձրացման, անգրագիտության վերացման, դասակարգային ինքնագիտակցության դաստիարակության բնագավառներում, նա ընդգծում է նաև հրամկազմի պատրաստման ուղղությամբ կատարված լայնածավալ աշխատանքները։ Խոսելով կարմիր բանակի արտաքին դրության մասին, Գայը գրտնում է, որ այն կայուն է. «Եվրոպական բուրժուազիան միանգամ ընդմիշտ համոզվեց իր ձեռնարկած գործի (ինտերվենցիայի) անմտության մեջ»։

Կարմիր սահմանների ներսում «սկսած Բալթիկ ծովից մինչև հեռավոր Թուրքեստանը խաղաղություն է տիրում», եթե չհաշվենք զուտ տեղական

2 Տե՛ս համապատասխանաբար՝ «Խորհրդային Հայաստան», 31. X. 1922, «Կարմիր Ռաշպարտ», 30. X. 1922, «Կարմիր զինվոր», 7. XI. 1922, «Կարմիր մարտիկ», հունվար, 1923 թ. և № 1 ու № 3—4, 1923։

ընության հակահեղափոխական հրոսակների գործողությունները։ «Միանգամ ընդմիշտ վերջ է տրված տխրահռչակ էնվերի արկածախնդրությանը ու բասմաչական շարժմանը, որը մի ժամանակ մեզ չափից դուրս անհանգստություն էր պատճառում»։

Անցնելով Հայաստանի կարմիր բանակի խնդիրներին, Հ. Բժշկյանը դրտնում է, որ այդ բանակը պետք է լինի ուժեղ և ռազմական դիտելիքներով լիակատար մարզված. անհրաժեշտ է սեփական հեղափոխական հրամկազմ պատրաստել, ուժեղացնել քաղաքական պրոպագանդան և կուսակցական աշխատանքը բանակում, ինչպես և բարելավել բանակի տնտեսական վիճակը։

Ռազմժողկոմ «Ընկեր Գայի կոչը Հայկական կարմիր բանակի քաջարի զինվորներին» հրահանգված էր կարդալ բանակի բոլոր զորախմբերում։ Դիմելով Հայկական կարմիր բանակի բոլոր զինվորներին և հիշեցնելով, որ Հայկական կարմիր բանակը «խորհրդային հանրապետության հոդսը, հույսն ու ապավենն է», նա կոչ է անում ջանքեր թափել «արդարացնելու մեզ վրա դրված հույսերը, կատարելու մեր սրբազան պարտքը», պարտավորեցնում է դառնալ գրագետ, քաղաքական գիտելիքներ ձեռք բերել, վարժվել ռազմական գործի մեջ, տիրապետել զենքի բոլոր տեսակների գործածության տեխնիկային։ Նույնանման բովանդակություն ունի նաև Հոկտեմբերյան հեղափոխության հինգերորդ տարեդարձին նվիրված «Վեցերորդ տարվա մեր խնդիրները» առաջնորդող հոդվածը «Կարմիր զինվոր» թերթում։

1923 թ. հունվարին լույս տեսավ «Կարմիր մարտիկ» նոր ամսագրի առաջին համարը, ուր հրապարակվել է Հ. Բժշկյանի «Զինաթափման հարցի շուրջը» հոդվածը «Բանվոր Հայկ» ստորագրությամբ։

Հոդվածի սկզբում հեղինակը կանգ է առնում զինաթափման հարցի պատմության վրա։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո խորհրդային իշխանությունը պաշտպանելու համար, երբ մեր հեղափոխական հայրենիքը շրջապատել էին արտաքին և ներքին թշնամիները, հրամայական պահանջ դարձավ ստեղծել սեփական կարմիր բանակ, որը հինգ տարվա ծանր քաղաքացիական կռիվների ընթացքում լիովին չախչախեց և երկրի սահմաններից դուրս շպրտեց ինտերվենտներին և սպիտակգվարդիականներին։ Բայց համաշխարհային կապիտալը չհանգստացավ. նա սկսեց նոր արշավանք խորհրդային իշխանության դեմ մամուլի միջոցով՝ ահաղանգելով «կարմիր իմպերիալիզմի վտանգի» մասին, իբր կարմիր բանակը պատրաստվում է արշավել Եվրոպայի վրա ու տարածել «պրոլետարական սոսկումները» քաղաքակրթված երկրներում։ Այդ դիվային զրպարտությանը ենթարկվելով, մեր հարևան Լեհաստանը, Ֆինլանդիան, Ռումինիան և Ճապոնիան զինվեցին մեր դեմ. նրանք ավազակային հրոսակախմբեր էին կազմում և ուղարկում Ռուսաստան՝ ասպատակություններ կատարելու։

Կարմիր բանակ ստեղծելու օրվանից,— գրում է Հ. Բժշկյանը, մենք միշտ ասում էինք, որ զորքը մեր ինքնապաշտպանության միջոցն է և ոչ նպատակը, որ մեր նպատակը խաղաղությունն ու զինաթափումն է։ Եվ երբ քաղաքական իշխանությունը ապահովեցինք արտաքին ու ներքին հարձակումներից՝ 5 ու կես միլիոնի հասնող կարմիր բանակի թիվը կրճատելով հասցրինք 800 հազարի։

Այնուհետև հեղինակը բացատրում է այն մյուս դրդապատճառները, որոնք անհրաժեշտ դարձրին այդ կրճատումը։ Մեծաքանակ զորքը, որպես ոչ

արտադրող, այլ միայն սպառող ուժ, սոսկալի կերպով ծանրացած էր ժողտնտեսության վրա և խլում էր երկրի բովանդակ բյուջեի 50 տոկոսը։ Այդքան զորք պահելու, զինելու և հագցնելու համար խորհրդային իշխանությունը ստիպված էր տարեկան մոտ 300 միլիոն ռուբլի ոսկի դրամ ծախսել։ Դա նշանակում էր, որ երկիրը կորցնում էր 11 միլիոն աշխատավոր ձեռքի աշխատանք (հինգ ու կես միլիոն բանակայիններ, որոնք արտադրողական աշխատանք չէին կատարում և հինգ ու կես միլիոնի չափ արտադրողներ, որոնց արտադրածը ծախսվում էր բանակի պահպանության վրա)։ Միաժամանակ «զորքի կրճատման ակտով, գրում է Հ. Բժշկյանը, խորհրդային իշխանությունը փաստորեն ցախջախեց բուրժուազիայի բարբաջանքները և ի լուր աշխարհի հայտարարեց, որ մենք նվաճողական նպատակներ չունենք և գանկանում ենք խաղաղ վերաշինությամբ զբաղվել»։

Մենք միայն դրանով չբավականացանք։ Միջազգային պրոլետարիատի շահերից ելնելով «առաջին անգամ Ջենովայի խորհրդաժողովում մեր արտաքին գործերի կոմիսար ընկ. Չիչերինը ընդհանուր զինաթափման հարցն առաջարկեց, գրում է Հ. Բժշկյանը։ Բուրժուազիայի պնակալեզ դիվանագետները խիստ վախեցան Չիչերինի առաջարկից և պատճառաբանելով, որ զինաթափության խնդիրը օրակարգի հարցերի մեջ չի մտնում, մերժեցին մեր առաջարկը»։ Բայց մենք բարոյական խոշոր հաղթանակ տարանք։ Եվրոպական երկրների բանվորությունը առաջին անգամ առիթ ունեցավ զգալու, որ աշխարհի մեջ միակ իշխանությունը, որն անկեղծորեն ցանկանում է միլիտարիզմի դեմ կռվել, խաղաղ ապրել և վերաշինությամբ զբաղվել՝ այդ միայն Ռուսաստանի խորհրդային հանրապետությունն է։

Հ. Բժշկյանն այնուհետև գրում է. «Կես տարի առաջ նորից դիմեցինք, այս անգամ մեզ հարևան բոլոր երկրներին, որ գան Մոսկվա զինաթափման հարցը լուծելու»։ Ամբողջ կես տարի պատասխանը ձգձգելուց հետո Ռումինիան հրաժարվեց խորհրդակցությանը մասնակցել, իսկ Լեհաստանի, Ֆինլանդիայի, Լատվիայի, Լիտվայի և Էստոնիայի Մոսկվա ժամանած ներկայացուցիչները ընկ. Լիտվինովի առաջարկը՝ $^3/_4$-ով կրճատել զորքերի քանակը, գտան «խիստ խաղաղասեր»։ Այն ժամանակ Լիտվինովը առաջարկում է մի տարվա ընթացքում զորքերի քանակը միայն մեկ քառորդով կրճատել։ Իրական զինաթափումից խուսափելու համար այդ երկրների ներկայացուցիչները դիմում են կեղծիքների, այսինքն իրենց զորքի առկա քանակը դիտմամբ մեծ են ցույց տալիս, որպեսզի կրճատումը կատարվի միայն կարմիր բանակի հաշվից։ Երբ այդ խորամանկությունը մերկացվում է, նրանք արդեն հայտարարում են, որ «զինաթափվել չենք կարող և չենք ուզում»։

Հ. Բժշկյանը կանգ է առնում նաև բանվորական շարժման դեմ կապիտալի հարձակումների ուժեղացման փաստի վրա. «Գերմանիայում արդեն կազմվել են ֆաշիստական ռազմական բանակներ, Ֆրանսիայում կառավարությունը պաշտոնապես թույլատրել է ֆաշիստական խմբակների կազմությունը, Լեհաստանում ծայր են առել հակահեղափոխական մի շարք պագրոմներ, Իտալիայում նախկին «սոցիալիստ» Մուսոլինին օրեցօր ավելի սոսկալի դավադրություններ է լարում բանվորական շարժման դեմ։

Մեր հարևան բուրժուական երկրները այդ իրադրության պայմաններում չէին կարող համաձայնել զինաթափման մեր առաջարկին, որովհետև կապիտալիստական խոշոր երկրների տնտեսական ու քաղաքական ազդեցության

տակ էին գտնվում, խորհրդային երկրի դեմ գաղտնի ռազմական դաշինքով էին կապված միմյանց հետ։ Բացի այդ, նրանք զինված մեծ ուժերի կարիք ունեին սեփական պրոլետարիատի ընդվզումները ճնշելու համար։

Վերջում Հ. Բժշկյանը հույս է հայտնում, որ հակառակ բուրժուազիայի ցանկության, վերջ ի վերջո, միջազգային զինաթափումը տեղի կունենա։

Հաջորդ մեծածավալ հոդվածը՝ «Հեծելազորի նշանակությունը ժամանակակից պատերազմներում», արդեն լուրջ ռազմագիտական բնույթ ունի և գրվել է հրամկազմի տեսական պատրաստությանը նպաստելու համար. Ծանոթության մեջ Հ. Բժշկյանը հիշատակում է, որ հոդվածը Մոսկվայի ռազմական ճեմարանում և ռազմագիտական ընկերության մեջ իր կարդացած զեկուցման կոնսպեկտն է, որ ընդարձակելով առաջարկվում է հրամկազմի ուշադրությանը։

Հոդվածի սկզբում Հ. Բժշկյանը նկատում է. «Մանջուրիայի լայնածավալ զորաճակատում գտնվող ռուսական հեծելազորի անշնորհք կառավարումը 1904—1905 թթ., հեծելագնդերի սակավ գործադրումը համաշխարհային պատերազմում՝ 1914—1918 թթ., ռազմական տեխնիկայի ե օդագնացության հսկայական կատարելագործումը իրավունք է տալիս զորքի մեքենայացման կողմնակից ռազմագետներին ժխտել հեծելազորի մեծ նշանակությունը ժամանակակից պատերազմներում»։

Հ. Բժշկյանը սխալ է համարում հեծելազորի դերի թերագնահատումը։

Վերլուծելով ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ ցարական գեներալների տակտիկական և ստրատեգիական լուրջ սխալները, հեղինակը բերում է օրինակներ, թե ինչպես ռուսական հզոր հեծելազորը անգործության է մատնվել սխալ ղեկավարության պատճառով, իսկ ճապոնական թույլ հեծելազորն իր համարձակ ու ակտիվ գործողություններով ստիպել է ռուսական զորամասերին նահանջել։ Այդ տաղանդազուրկ գեներալները՝ «Կուրապատկինից սկսած մինչև գեներալ Միշչենկոն ռուս-ճապոնական լայն-շարժական պատերազմում չկարողացան օգտագործել դյուրաշարժ, թեթև, ոգով ու քանակով գերազանց ռուսական հեծելազորը»,—եզրակացնում է Հ. Բժշկյանը։

Հոդվածի հաջորդ հատվածում Գայը թվարկում է ռուսական հեծելազորի խիզախ ու հաջող ռազմական գործողությունների 8 կոնկրետ դեպքեր՝ առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում։ Ապա նա հիշատակում է գերմանական հեծելազորի ճիշտ օգտագործման օրինակներ և ապացուցում, որ համաշխարհային պատերազմի ժամանակ թե՛ ռուսական և թե՛ գերմանական հեծելազորը լայնորեն օգտագործվել են, գլխավորապես զորաբանակների թևերում, և նշանակալի դեր են կատարել։ «Վերոհիշյալ բոլոր կռիվներում, գրում է Գայը, փառավոր կազմակերպված, դաստիարակված գերմանական հեծելազորը, շնորհիվ բարձրագույն հրամկազմի ընդունակության, տվեց պատերազմի ընթացքում ավելի մեծ արդյունք, քան ռուսական հեծելազորը»։

Ցույց տալու համար, թե ինչ նշանակություն է տրվել հեծելազորին համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում արևմտյան ռազմաճակատում, հեղինակը բերում է թվական տվյալներ հեծելազորի ընդհանուր քանակի մասին։ Արևմտյան ռազմաճակատում Գերմանիան դուրս է բերել 856 էսկադրոն, Ֆրանսիան՝ 589, Անգլիան՝ 276, Բելգիան՝ 72, ընդամենը 1812 էսկադրոն կամ մոտ 360 հազար թրակալ, իսկ արևելյան ռազմաճակատի

հետ միասին 600 հազար հեծյալ «մի ահռելի թիվ, որ ինքնին արդեն հերքում է այն անհեթեթ ենթադրությունը, որ իբր հեծելազորը համաշխարհային պատերազմում ակտիվ մասնակցություն չունեցավ»։ Վերլուծելով գերմանական և ֆրանսիական հեծելազորների մի շարք վճռական նշանակություն ունեցող գործողությունները, նա եզրակացնում է, որ մասսայական զորաբանակների առկայության դեպքում էլ «հեծելազորը, որպես անկախ զորամաս շարունակում է ոչ միայն գոյություն ունենալ, այլև ձգտում է երբեմն վճռական դեր խաղալ»։

Ապա Գայն անդրադառնում է հեծելազորի դերին ժամանակակից պատերազմում։ Թեև մասսայական զորահավաքների միջոցով բանակ են զորակոչվում տասնյակ միլիոնավոր մարդիկ, հեծելազորի քանակը, սակայն, չի կարող շատ մեծանալ և՛ թանկ լինելու, երկար ժամանակ ու համառ մարզում պահանջելու, և՛ ձիերի քանակի սահմանափակության պատճառով։ Բայց ինչքան բանակները մեծ են, այնքան նրանք դանդաղաշարժ են, այնքան նրանց թևերը խոցելի են. այլ զորամասեր ընդունակ չեն հակառակորդին հետապնդել մինչև վերջ։ Այդ պատճառով արագաշարժ հեծելազորի դերը չի փոքրանում, նրա կարիքը միշտ զգացվում է։ Գայը բազմաթիվ օրինակներով ապացուցում է, որ հեծելազորը վճռական դեր է կատարել նաև քաղաքացիական պատերազմի ժամանակ և եզրակացնում, որ ապագա պատերազմների ժամանակ ևս հեծելազորը մեծ դեր կկատարի։

Գայի այս վերջին ենթադրությունը, իհարկե, ճիշտ չէր։ Ինչպես հայտնի է համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ տանկերի և ինքնագնաց այլ մեքենաների ստեղծմամբ և մասսայական գործադրությամբ հեծելազորը կորցրեց իր նախկին վճռական նշանակությունը։ Սակայն 1923 թ., երբ տանկերի մասսայական արտադրության հնարավորություններ դեռ չկային ոչ միայն դեռևս ագրարային Ռուսաստանում, այլև այն ժամանակ շատ ավելի զարգացած արդյունաբերություն ունեցող կապիտալիստական երկրներում, Հ. Բժշկյանը կարող էր և ոչ ճիշտ գուշակություն անել ապագա պատերազմներում հեծելազորի դերի մասին։

Հ. Բժշկյանի այս հոդվածը արժեքավոր է անցած պատերազմներում հեծելազորի խաղացած դերի, նշանակության, ռազմական գործողությունների հեղինակի խորն իմացությամբ, մանրամասն նկարագրությամբ և գիտական վերլուծությամբ։

Հիշատակելով, որ հեծելազորների բազմաթիվ մարտերի իր նկարագրությունները լիակատար չեն, հեղինակն ափսոսում է, որ կարմիր հեծելազորի հերոսական գործերը դեռ մանրամասն ուսումնասիրված ու հրատարակված չեն։ Մինչդեռ քաղաքացիական կռիվներում կարմիր բանակի հաղթանակն ապահովվեց հեծելազորի արյունահեղ ճակատամարտերով՝ Ցարիցինի, Վորոնեժի, Նովո-Չերկասկի, Տիխորեցկի, Եգորլիկսկի և այլ քաղաքների մոտ՝ հարավային և հարավ-արևելյան ռազմաճակատում, և Ռովնո, Լվով, Վիլնո, Գրոդնո, Լոմժա, Օսովեց, Պլոցկ, Վլացլավսկ, Պլոնսկ քաղաքների մոտ՝ արևմտյան ռազմաճակատում, երբ կարմիր հեծելազորը զարմացրեց աշխարհի ռազմագետներին՝ իր տոկունությամբ ու անվեհերությամբ։ «Միայն հեղափոխական կարմիր հեծելազորն է ընդունակ թրերով Օսովեցի և Գրոդնոյի պես ամրացված բերդեր գրավել»։

Հ. Բժշկյանը հետագա տարիներին հանդես է եկել հայերեն երեք պատմվածք-ակնարկներով, որոնք հրատարակվել են առանձին բրոշյուրներով։ Դրանք են «Մացակ բիձան» (1930 թ. և 1960 թ.), «Գետանցը» (1930 թ.) և «Տասներկու տարի առաջ» (1931 թ.)։

СТАТЬИ ГАЯ В АРМЯНСКОЙ СОВЕТСКОЙ ПЕЧАТИ

В. А. ОГАНЯН

Резюме

Легендарный герой гражданской войны, начальник железной дивизии Гай (Айк Бжшкян), тесно связанный с прогрессивной армянской печатью до Октябрьской революции в качестве рабкора из Баку, продолжал свое активное участие в работе армянской советской печати во время гражданской войны и в первые годы мирного строительства социализма.

В статье «Красная Армия» (газ. «Коммунист», М., 1919), переизданной отдельной брошюрой в том же 1919 г., он знакомит не владеющих русским языком армян с Красной Армией, с ее структурой и задачами. В советской армянской печати он толково разъясняет принципиальную мирную политику Коммунистической партии, суть предложений Советского правительства о разоружении, необходимость сокращения численности Красной Армии после гражданской войны, задачи боевого и политического воспитания молодых красноармейцев в мирное время и т. д.

В объемистой статье «Значение кавалерии в современных войнах» (в журнале «Кармир Мартик», 1932 г., Ереван) Гай приводит многочисленные примеры и аргументы, подтверждающие важную роль кавалерии в первой мировой и гражданской войнах.